

ԵՐԿԱՆՆԻ ՖՐԱՆԳՅԱՆԸ
ՓԻԼԻՍՈՓՈՍՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ս. Ն. ՕՂԱՆՅԱՆ

Հայ փիլիսոփայության պատմության ամենահետաքրքրական, միաժամանակ քիչ ուսումնասիրված, նաև լուրջ աղավաղումների ենթարկված շրջաններից մեկը, թերևս, XX դարի առաջին կեսն է: Այս շրջանում հայ փիլիսոփայության մեջ տարածվել էր պոզիտիվիզմի երկրորդ ձևը՝ մախիզմը կամ էմպիրիոկրիտիցիզմը, որի խոշորագույն ներկայացուցիչն էր Երվանդ Ֆրանգյանը (1878-1928): Ի թիվս այլ «ոչ մարքսիստական», «գուրծուական» փիլիսոփայական ուղղությունների՝ Ֆրանգյանի փիլիսոփայությունը խորհրդային գրականության մեջ որակվել է որպես սուբյեկտիվ իդեալիզմ կամ ֆեմոմենալիզմ¹, իսկ նրա հայացքները հիմնականում մեկնաբանվել, ավելի ճիշտ՝ քննադատվել են միայն մարքսիզմի դիրքերից՝ համարվելով «էկլեկտիկական խառնուրդ, զարմանալիորեն խայտաբղետ, տարբեր, նույնիսկ իրարամերժ հայացքների մի կոնգլոմերատ»² և «բացահայտ տերտերականություն»³: Ներկայումս ժխտողական միակողմանի վերաբերմունքի հաղթահարման նպատակով անհրաժեշտություն է ծագել նորովի իմաստավորել այս ինքնատիպ մտածողի ուսմունքը:

Հետևելով Է. Մախին և Ռ. Ավենարիուսին՝ Ֆրանգյանն իր փիլիսոփայությունն անվանում է համադրական մոնիզմ կամ քննադատական-իրապաշտ փիլիսոփայություն: Նա, ընդհանրացնելով փիլիսոփայական բոլոր ուղղությունները, առանձնացնում է մտածողության երկու՝ իրար միանգամայն հակադիր տեսակների՝ մոնիստական և դուալիստական, որոնք գոյություն են ունեցել մեկտեղ և միաժամանակ: Բայց որքան մարդկային միտքը նորանոր նվաճումներ է ունենում, որքան նորանոր գիտական մեթոդներ են երևան գալիս, այնքան ավելի ու ավելի տիրապետող է դառնում մոնիստական մտածելակերպը: Ֆրանգյանն առանձնացնում է մոնիզմի պատմական երեք դրսևորում՝ միմյանց լրիվ հակադիր մատերիալիզմն ու իդեալիզմը և նրանց միակողմանիություններից զերծ համադրական մոնիզմը: Համադրական մոնիզմի փիլիսոփայության հիմքում ընկած է զաղափարների փոխադարձ լրացման սկզբունքը: Առաջին հերթին դա վերաբերում է սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությանը. «Եմթական (սուբեկտ) եւ առարկան (օբեկտ) *համարժէք* են իբրև փորձի հաւասար եւ համազօր անդամներ: Այն հարցը, թէ դրանցից որն է առաջնական եւ որն է որից ծագում,- զուտ բնագանցական հարց է: Նրանք միաժամանակ տրուած են... իմաստ եւ արժեք են ստանում *միայն* այդ փոխադարձ յարաբերութեամբ»⁴: Երկրորդ՝ միմյանց լրացնում են նաև

¹ Տե՛ս Հ. Գ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 4, Եր., 1965, էջ 123, նույնի՝ Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1976, էջ 391, Վ. Ղ. Սևյան, Հայ բուրժուական փիլիսոփայության քննական վերլուծություն, Եր., 1971, էջ 78:

² Տե՛ս Վ. Ղ. Սևյան, նշվ. աշխ., էջ 80:

³ Տե՛ս Հ. Գ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, էջ 108:

⁴ Ե. Ֆրանգյան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը: Իրապաշտ փիլիսոփայություն, Հ. Յ. Դաշնակցութեան փիլիսոփայական աշխարհայեացքի հիմնատրման փորձ, Փարիզ, 1929, էջ 92:

մարդկային հոգու երեք հիմնական տարրերը՝ մտածողությունը, կամքը և զգացմունքը. «...կամքի, զգացումի եւ իմացականութեան կամ մտքի բիրեղացած պրօցէսներ տեղի չեն ունենում»⁵: Երրորդ՝ հասարակագիտության մեջ համադրական մոնիզմը դրսևորվում է որպես պատմական ռեալիզմի տեսություն, որի ելակետը կազմում է պատմական գործընթացն իր ամբողջության մեջ. «Պատմական պրօցէսի տարրերից մէկը չի ներկայանում իբր պատճառ, միսը՝ հետեանք, մէկը՝ առաջնական, միսը՝ երկրորդական, մէկը՝ ակտիվ, միսը՝ պասիւ: Նրանք համարժեք են եւ գտնուում են մշտական փոխազդեցութեան մէջ»⁶:

Ֆրանզյանն ապրում էր մի դարաշրջանում, որը Խ. Օրտեգա-ի-Գասետը համարում է փիլիսոփայության համար ամենամբարենպաստ ժամանակաշրջաններից մեկը, քանի որ դրական գիտությունների հաղթարշավի պայմաններում «փիլիսոփայությունն ահաբեկված էր լաբորատորիաների ինտելեկտուալ տեռորիզմով»⁷: Եվրոպայում դա հակափիլիսոփայական ժամանակ էր, երբ հետևելով պոզիտիվիստական մտածողությանը՝ փիլիսոփայության և գիտությունների առանձնահատկությունները հանգեցվում էին զուտ քանակական տարբերություններին: Քննադատելով փիլիսոփայական նախկին մեթոդը, որը մեծ մասամբ բերում էր հակասական կարծիքների, պոզիտիվիստներն իսկական փիլիսոփայական մտածողությունից պահանջում էին բնագիտական ճշգրտություն: Ըստ Օ. Կոնտի՝ այդպիսի փիլիսոփայությունը պետք է «արմատապես վտարի անխուսափելիորեն անլուծելի բոլոր հարցերը»⁸ և զբաղվի գիտությունների առաջադրած դրոյթների համակարգմամբ: XIX դարի վերջին-XX դարի սկզբին այս միտումը նկատվում էր նաև հայ մտավորականության շրջանում: Օրինակ՝ «Փիլիսոփայությունը իր բովանդակությամբ շաղկապուած է միւս գիտութիւնների հետ, բայց նրա գլխատըր ձգտումն է դրանց բազմազանութիւնից դուրս բերել տրամաբանական մի ամբողջութիւն»⁹: Կամ. «Գիտութիւնը տալիս է միայն փաստերի, ծանօթութիւնների մասնակի միատրումն, այն ինչ փիլիսոփայութիւնը տալիս է լիակատարը»¹⁰: Բայց դրանով էլ ավարտվում են հայ և եվրոպական մտածողների մտանությունները: Հայ փիլիսոփայական մտքի գիտապաշտական ուղղության ներկայացուցիչներն ընդգծում են նաև փիլիսոփայության արժեքաբանական էությունը: Դա հայկական պոզիտիվիզմի կարևորագույն առանձնահատկությունն է, որն էլ շեշտում է Ե. Ֆրանզյանը: Ի տարբերություն պոզիտիվիստ փիլիսոփաների, որոնք փիլիսոփայության շրջանակներից դուրս են բերում մտահայեցողական, վերացական բնույթի հարցերը, Ֆրանզյանն ընդունում է նաև փիլիսոփայության կենսահիմաստային կողմը: Նա քննարկում է փիլիսոփայության էության հետ կապված 3 հարց.

Գոյություն ունի՞ արդյոք փիլիսոփայությունը:

Եթե փիլիսոփայությունը գոյություն ունի, ապա որո՞նք են նրա առանձնահատկությունները:

⁵ Նույն տեղում, էջ 138:

⁶ Ե. Ֆրանզյան, Հասարակագիտական էտիոլոգիա. Հ.Յ.Դաշնակցութեան սօցիալ-փիլիսոփայական աշխարհայեցողութեան հիմնարկուման շուրջը, Բագու, 1917, էջ 104:

⁷ X. Ortega-i-Gasset, Что такое Философия? М., 1991, с. 70.

⁸ О. Конт, Дух позитивной философии (слово о положительном мышлении), СПб., «Вестник знания», 1910, с. 35.

⁹ Ե. Թոփչեան, Ի՞նչ է փիլիսոփայութիւնը, «Լոյս պատկերազարդ օրացոյց հանդէս 1904 թուականի», Թիֆլիս, 1903, էջ 375-376:

¹⁰ Մ. Յովհաննիսեան, Փիլիսոփայական մտքի ընդհանուր էտիոլոգիայի ուրուագիծը, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիվ 9, էջ 74:

Եթե փիլիսոփայությունը՝ որպես առանձնահատուկ համակարգ, գոյություն ունի, ապա ո՞րն է նրա ուսումնասիրության առարկան:

Առաջին հարցին նա տալիս է միանշանակ դրական պատասխան: Թեև կան մարդիկ, որոնք փիլիսոփայության գոյությունը կասկածի են ենթարկում՝ ասելով, որ փիլիսոփայությունն արդեն անցել է պատմության գիրկը, ինքն իր համար դարձել է պատմական փաստ և գոյության գրավական այլևս չունի, սակայն Ֆրանգյանն անհիմն է համարում այդ պնդումը: Փիլիսոփայությունն իբրև գիտական համակարգ հարատևում է ու հարատևելու է հավետ, այն չի կարող վերանալ և, հետևաբար, պատմության սեփականություն դառնալ այն պարզ պատճառով, որ մարդն իր էությանը փիլիսոփայող է: Դրանով նա շարունակում է Դավիթ Անհաղթի այն միտքը, թե «ոչ վարկպարագի է իմաստասիրութիւն... վասն այսորիկ է իմաստասիրութիւն՝ վասն զարդարելոյ և պաճուճելոյ զմարդկային հոգիս և փոփոխելոյ զնա ի նիւթային և ի մառախղուտ կենցաղոյս յաստուածայինն և յաննիւթն»¹¹:

Ֆրանգյանը կարծում է, որ փիլիսոփայությունը չի դադարում և երբեք չի դադարելու լինել մարդկային խորունկ մտքի որոնումների առանցքը, քանի որ «մարդկային տիեզերական, պրոպրիոսոփիա եւ խորապէս հետազոտող միտքը միշտ էլ առարկայ է շինում իր համար համաշխարհային առեղծածներ եւ պրօբլեմներ, եւ աշխատում է տալ նրանց գոհացուցիչ լուծումը»¹²: Փիլիսոփայությունը մարդկային մտքի բնորոշ և էական հատկությունն է: Մարդը դիտում է, տեսականորեն վերլուծում իրերն ու երևույթները և ընդհանրացնում: Մարդկային միտքը հավետ ընդհանրացնում է. տեսական մտածողության, ընդհանրացման կարողությունը նա բերում է իր հետ, նա կրում է այն իր մեջ, դա նրա էությունն է: Իսկ առանց ընդհանրացման չկա փիլիսոփայություն: Փիլիսոփայությունը մարդու ընդհանուր գործառույթն է:

Այս տեսակետից Ֆրանգյանն ընդգծում է մարդու և կենդանու միջև այն կարևոր տարբերությունը, որ կենդանին տեսնում է իրերն ու երևույթները, լսում, շոշափում, բայց նրա մտքի կարողությունը, նրա ճանաչողությունը դրանից այն կողմ չեն գնում: Կենդանու համար գոյություն ունեն զգայելի իրեր և երևույթներ՝ ցաքուցրիվ, չհամակարգված, այսինքն՝ այնպես, ինչպես նրանք երևան են գալիս բնական ընթացքի մեջ: Նա անկարող է ընդհանրացնել, նա ի վիճակի չէ տեսական մի ամբողջության վերածելու այդ բազմությունը: Կենդանին չունի մարդու յուրահատուկ էությունը կազմող տեսական մտածողություն: Մարդն ընդունակ է իրերի և երևույթների այդ ցաքուցրիվությունը դնել ներդաշնակ ու կապակցված համակարգի մեջ: Այս իմաստով ամեն անհատ ունի իր փիլիսոփայությունը: Բայց յուրաքանչյուրը փիլիսոփայում է իր տեսակետով և իր կարողության չափով: Գյուղացու մտահորիզոնն ավելի նեղ է և սահմանափակ, քան մտավորականինը: Գյուղացու մտածողությունը պարզ է և գիտական բնույթից զուրկ, մինչդեռ մտավորականի մտածողությունն ավելի խորն է ու գիտական: Բայց այս տարբերությունն էական չէ, այլ միայն աստիճանական, որովհետև երկուսն էլ ընդհանրացնում են, ուրեմն նաև՝ փիլիսոփայում:

Այս ամենից Ֆրանգյանն անում է այն եզրակացությունը, որ փիլիսոփայությունը մարդ արարածի անբաժան մասն է, նրա էությունը: Քանի մարդը գոյություն ունի, քանի նա ապրում է, գոյություն կունենա և կապրի նաև փիլիսոփայությունը: Իր միտքն ավելի ընդգծելու համար նա բերում է Շիլլերի խոսքերը. «Թե

¹¹ Դավիթ Անհաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, Եր., 1980, էջ 103-104:

¹² Ե. Ֆրանգեան, Ի՞նչ է փիլիսոփայութիւնը, «Մխար. զուտ գիտական եւ փիլիսոփայական ժողովածու», խմբ. եւ հրատ. Ե. Ֆրանգեան, Եր., 1910, էջ 7:

բոլոր փիլիսոփայություններից որը կմնա, ես այդ չգիտեմ: Բայց ինքը՝ փիլիսոփայությունը, հավետ կմնա»: Հետևաբար, փիլիսոփայությունն ազատ մարդկանց զբաղմունք չէ, ինչպես կարծում են շատերը, այլ, ընդհակառակն, յուրաքանչյուր մարդու գործն է: Անկախ իր կամքից՝ մարդը փիլիսոփայում է, քանի որ ընդհանրացումներ է անում: Իմացական մղումը մարդու մեջ նույնքան բնական ու հզոր է, որքան գործունեության ու վայելքի մղումը: Ճշմարիտը, բարին ու գեղեցիկը հավասարազոր են ու հավասարաբեռ: Իմանալը, կամենալը և կարողանալը մարդու էական հատկություններն են: Իր էությամբ այդպիսին լինելով՝ մարդը միշտ էլ ունեցել է որոշակի աշխարհայեցողություն, փիլիսոփայական որոշակի տեսակետ: «Որքան էլ մենք յետ նայենք, անգամ քաղաքակրթութեան ամենասկզբնական շրջանները, դարձեալ կհանդիպենք որոշ աշխարհայեցողութեան»¹³: Դիտելը, համեմատելը, վերլուծելը, համադրելը, ընդհանրացնելը մարդու բնական մղումներն են: Մարդկային միտքը միշտ էլ ձգտում է որոնել, գննել իրերը, ճանաչել նրանց էությունը, իմանալ աշխարհի ծագումը և վախճանը: Ֆրանգյանը բնորոշ է համարում այն ուշագրավ երևույթը, որ մարդկային միտքը մի կողմ է թողնում պարզ ու հասկանալի կամ, ըստ երևույթին, պարզ ու հասկանալի երևույթը դարձնում է իր համար խնդիր, խրթին ու կնճռոտ հարց: Պարզը, հասկանալին մարդու հետազոտող մտքին որոնելու, տարրալուծելու, փիլիսոփայելու նյութ չի տալիս: Մարդկային միտքը կանգ է առնում բարդի, անհասկանալիի, խնդրահարույցի վրա: Իսկ կյանքի ու աշխարհի հիմնահարցերը բազմազան են, և օրեցօր նորերն են ծառանում մարդկային փիլիսոփայող մտքի առաջ: Մարդն իր գիտակցական կյանքի հենց առաջին օրից բազմաթիվ ու բազմազան հարցեր է տալիս իր շրջապատին ու պատասխանի սպասում. ի՞նչ են աշխարհը և կյանքը, ի՞նչ են երջանկությունը և ճշմարտությունը, որտեղի՞ց է գալիս և ու՞ր է գնում մարդը, ի՞նչ է մահը... Եվ այսպես անվերջ հարցումներ:

Փիլիսոփայությունը միշտ էլ ունեցել է և ունի իր առաջնակարգ տեղը երևույթների ու իրերի լուսաբանության մեջ: Դրա լավագույն ապացույցը Ֆրանգյանը համարում է փիլիսոփայության պատմությունը: Տարբեր են եղել աշխարհայացքները, բայց աշխարհայեցողությունը միշտ եղել է: Պատմության ընթացքում փիլիսոփայության նկատմամբ վերաբերմունքը տարբեր է եղել. ջատագովություն, թերահավատություն, արհամարհանք: Օրինակ, XIX դարի երկրորդ կեսին ուժեղանում է կասկածը փիլիսոփայության հնարավորությունների հանդեպ: Բայց դրա պատճառը Ֆրանգյանը համարում է ոչ այնքան փիլիսոփայությունը, որքան ժամանակաշրջանի յուրահատուկ պարագաները և եռուն կյանքի քաղաքական, սոցիալական ու տնտեսական հարցերը: XX դարում մարդուն դարձյալ սկսեցին հետաքրքրել փիլիսոփայական հիմնախնդիրները: «Այսօր...մարդս գերազանցապես փիլիսոփայող է: Մեր դարը փիլիսոփայութեան դար է»¹⁴: Թե՛ անհատները, թե՛ հասարակական հոսանքները, թե՛ քաղաքական կուսակցություններն աշխատում են հիմնավորել իրենց փիլիսոփայական աշխարհայացքը: Հարցերի տեսական լուսաբանումն ու հիմնավորումը նույնքան արժեքավոր և կարևոր են, որքան գործնական կողմը: Ծարունակելով հայ փիլիսոփայության՝ Դավիթ Անհաղթից եկող ավանդույթները¹⁵՝ Ֆրանգյանը համարում է, որ տեսականն ու գործնականն իրարից անբաժանելի են: Լինելով Հայ յեղափոխական դաշնակցության անդամ՝

¹³ Ե. Ֆրանգյան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը..., էջ 10:

¹⁴ Նույն տեղում, էջ 11:

¹⁵ Տե՛ս Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէր, Լուծմունք «Սահմանաց գրոց», աշխատասիրությանը Ա. Գ. Մադոյանի և Հ. Ղ. Միրզոյանի, Եր., 2004, էջ 48:

Ֆրանգյանը ցանկացած քաղաքական կուսակցության համար ընդհանուր փիլիսոփայական աշխարհայեցողության հիմնավորումն այնքան է կարևորում, որքան հստակ գաղափարախոսության մշակումը. «Հասարակական կեանքում *հաստատուն, անշեղ ու որոշակի* են ընդհանրապես այն հոսանքի քայլերը, որի փիլիսոփայական աշխարհայեացքը, *հասարակա-քաղաքական կոնցեպցիան որոշ, պարզ եւ բիրեղացած է: Անորոշ, տարտամ եւ երերուն են, ընդհակառակը, այն հոսանքի քայլերը, որի հասարակական-քաղաքական ըմբռնողութիւնը երերուն, անորոշ եւ բիրեղացած չէ*»¹⁶:

Ֆրանգյանը քննադատում է այն թյուր տեսակետը, թե փիլիսոփայությունը որևէ կապ և առնչություն չունի իրական կյանքի, կենսական հարցերի հետ, թե նա վերացական, կյանքից կտրված մարդկանց գործ է միայն: Ընդհակառակն, փիլիսոփայությունը սերտորեն կապված է սոցիալական կյանքի հետ: Եվ որքան փիլիսոփայությունը գիտականանում է, որքան զտվում է բնագանցական տարրերից, այնքան ավելի է մոտենում կյանքին: Ավելին, Ֆրանգյանը փիլիսոփայությունը համարում է ինքնապահպանման անհրաժեշտ և կարևոր ազդակ: Բացի դրանից՝ փիլիսոփայությունը միայն գիտություն, իմացության տեսություն չէ, այլև միաժամանակ արժեքների, «հոգեկան իրերի» տեսություն: Փիլիսոփայության կոչումը կյանքի առաջնորդություն լինելն է: Փիլիսոփայական հարցերը միաժամանակ և ամենից առաջ կենսահարցեր են: Ճանաչողությունն ու կյանքը միմյանցից անբաժան են: Ֆրանգյանը գիտական փիլիսոփայության մեծ և իսկական նպատակը համարում է աշխարհայացք, կենսահայեցողություն տալը: Այդ իսկ պատճառով մեծ փիլիսոփաները միաժամանակ նաև մարդկության մեծ առաջնորդներն են: Այսպիսով, ըստ Ֆրանգյանի՝ մարդկային կյանքում և պատմության մեջ փիլիսոփայությունը զորավոր ուժ է:

Լուծված համարելով փիլիսոփայության գոյության հարցը՝ Ֆրանգյանն անցնում է երկրորդ հարցի քննարկմանը. ի՞նչ է փիլիսոփայությունը: Այս հարցը խիստ բնորոշ և յուրահատուկ է փիլիսոփայության համար, քանի որ դրանով փիլիսոփայությունն ինքն իրեն հետազոտությունների և վերլուծությունների առարկա է դարձնում: Չկա որևէ գիտություն, որ այդպիսի հարցադրում ունենա ինքն իր վերաբերյալ: Ըստ գիտությունների անվանումներն անգամ բնորոշում են այն, ինչով նրանք զբաղվում են. բուսաբանություն, լեզվաբանություն, հոգեբանություն, աստվածաբանություն և այլն: Մինչդեռ այն հարցը, թե ինչ է փիլիսոփայությունը, միշտ և անմիջականորեն կանգնում է յուրաքանչյուր փիլիսոփայի առաջ: Սա փիլիսոփայության ամենաառաջին հիմնահարցն է: Փիլիսոփայությունն ինքն իր համար խնդիր է. նա իրեն դարձնում է խնդիր:

Ամեն փիլիսոփա աշխատել է տալ այդ հարցի իր պատասխանը, փիլիսոփայության իր սահմանումը: Եվ որքան տարբեր սահմանումներ կան, անհրաժեշտաբար գոյություն ունեն նույնքան փիլիսոփայական համակարգեր, որովհետև սահմանման մեջ արտահայտվում է տվյալ փիլիսոփայական աշխարհայացքի էությունը: Այդ պատճառով Ֆրանգյանն ուսումնասիրում է փիլիսոփայական տարբեր դարաշրջանները՝ ցույց տալու համար փիլիսոփայության ըմբռնումների ձևափոխությունները:

Հունական փիլիսոփայության առաջին փուլում փիլիսոփայությունն ուներ բացառապես տեսական նշանակություն և արժեք: Դա բնափիլիսոփայության շրջանն էր: Ամենամեծ հիմնախնդիրը տիեզերքի և բնության ուսումնասիրությունն էր: Մյուս փուլում սովետները, ստոիկները և էպիկուրականները շեշտեցին

¹⁶ Ե. Ֆրանգյան, Փիլիսոփայական նամակներ, «Գործ» օրաթերթ, Թիֆլիս, 1908, թիվ 19 (հոկտեմբերի 3), էջ 3:

փիլիսոփայության նոր բնույթը: Սուկրատեսը ցած էր բերել փիլիսոփայությունն իր անհասանելի երկնային բարձունքից և իջեցրել մինչև երկրի մակերևույթ, մինչև չարիքով ու բարիքով լի մարդկային կյանքը: Դա արժեքների դարն էր. յուրաքանչյուր իր արժևորվում էր մարդու տեսակետով: Փիլիսոփայության էությունն արժեքն էր: Փիլիսոփայությունը դադարեց ինքնանպատակ լինելուց և ստորադասվեց կյանքին, դիտվեց որպես մարդկային երջանկության լավագույն միջոց: Մարդկային հետաքրքրության հիմնական առարկան բարիքն էր: Ստոիկները փիլիսոփայությունը համարում էին հոգու անդորրության և ներքին բացարձակ ազատության միջոց, իսկ էպիկուրականները՝ մարդուն դեպի երջանկություն տանող ճանապարհ: Այսպիսով, եթե առաջին փուլում իշխողը ճանաչողության տեսությունն էր, ապա երկրորդում՝ արժեքաբանությունը, բարոյագիտությունը: Ֆրանգյանի համար արտաքննապես հակադիր այս երկու տեսությունները ոչ թե բացառում են իրար, այլ լրացնում: Դրա ապացույցն է Պլատոնի փիլիսոփայությունը, որում միացած են իմացաբանությունը և արժեքաբանությունը: Նույն միտումը նկատվում է նաև Արիստոտելի մոտ: Բայց Արիստոտելը սկզբնավորում է մի նոր շարժում, մի նոր գործընթաց: Դա գիտությունների դիֆերենցիացիայի՝ տարրաբաժանման գործընթացն է: Փիլիսոփայությունը ճյուղավորվում է: Մինչ այդ չկար ոչ մի գիտություն փիլիսոփայությունից դուրս կամ նրա կողքին: Փիլիսոփայությունը համարվում էր միակ և ընդհանուր գիտությունը: Համենայն դեպս, Արիստոտելը փիլիսոփայությունն ընկալում էր որպես համընդհանուր, համապարփակ գիտություն, «ուսմունք առհասարակ իրերի էութեան մասին կամ իրերի հիմքերի մասին»¹⁷: Նա անջատեց փիլիսոփայությունից մի շարք գիտաճյուղեր՝ ֆիզիկա, տրամաբանություն, բարոյագիտություն, գեղագիտություն և այլն:

Գիտությունների տարրաբաժանման գործընթացը շարունակվում է մինչև այժմ, միայն թե ավելի արագ, ավելի լայնամասշտաբ ձևով: Գիտությունները մեկ առ մեկ առանձնանում են «մայր» գիտությունից՝ փիլիսոփայությունից, և դառնում ինքնուրույն, առանձին, բայց փիլիսոփայությունից ոչ բոլորովին անկախ գիտություն: Գիտությունների տարրաբաժանման այս երևույթի պատճառով կասկածի է ենթարկվում փիլիսոփայության գոյությունը: Բավական տարածված է այն կարծիքը, որ այդ գործընթացի հետևանքով փիլիսոփայությունն օրավուր հյուծվում, կմախքանում է. նա աստիճանաբար վերածվում է մի հնչական, դատարկ, անբովանդակ մեծության:

Ֆրանգյանը համաձայն չէ այդ տեսակետը պաշտպանողների հետ: Գիտությունների ճյուղավորման երևույթի հետ միաժամանակ նկատելի է նաև մեկ այլ երևույթ՝ նույնքան ուշագրավ, նույնքան բնորոշ և հետաքրքրական: Դա այն է, որ գիտությունները ձգտում են վերադառնալ այնտեղ, որտեղից նրանք սկիզբ են առել՝ դրանով կրկին կազմելով ամբողջություն:

Այստեղ բացահայտվում է փիլիսոփայության ու գիտությունների փոխհարաբերությունը: Երկու է, յուրաքանչյուր գիտություն, գիտական յուրաքանչյուր համակարգ ունի իր ուսումնասիրության առանձին առարկան, որը, սակայն, բովանդակ իրականության մի բաղկացուցիչ մասն է միայն, իսկ այդ իրականությունը պատկանում է բոլոր գիտություններին՝ ամբողջության մեջ վերցված: Գիտությունները չեն կազմում իրար հետ որևէ առնչություն չունեցող մասերի կույտ: Ընդհակառակն, նրանք միմյանց փոխադարձաբար պայմանավորում են և միանալով փիլիսոփայության մեջ՝ կազմում մի ներդաշնակ ամբողջություն:

¹⁷ Ե. Ֆրանգյան, Յունական փիլիսոփայություն, Թիֆլիզ, 1913, էջ 61:

Ֆրանգյանը հարցերի այս շրջանակի հետ է կապում երրորդ հարցի լուծումը. ո՞րն է փիլիսոփայության ուսումնասիրության առարկան: Փիլիսոփայական մտածողության առանձնահատկությունն այն է, որ նա չի վերցնում առանձին հարցերը և բնում մեկուսացած, այլ բնում է հարցերն ամբողջության, ընդհանուր կապակցվածության մեջ: Եթե գիտության վերլուծության առարկան իրականության մի հատվածն է, մի կողմը, ապա փիլիսոփայությունն ընդգրկում է բովանդակ իրականությունը: Թե՛ մեկը, թե՛ մյուսն ունեն միևնույն նյութը: Նրանք միմյանցից անբաժան են և փոխապայմանավորված: Ըստ Ֆրանգյանի՝ չկա գիտությունն առանց փիլիսոփայության, և փիլիսոփայություն՝ առանց գիտության: Գիտությունները կազմում են փիլիսոփայության հիմքը, իսկ փիլիսոփայությունը գիտությունների ընդհանուր օրենքներն ու հիմնադրույթները բերում է ընդհանուր հայտարարի՝ վերածելով մի ամբողջական համակարգի: Առհասարակ փիլիսոփայության և գիտության փոխհարաբերության վերաբերյալ նման տեսակետը քավական տարածված էր ժամանակաշրջանի ինչպես եվրոպական, այնպես էլ հայ փիլիսոփայական մտքի մեջ: Հայ մտածողներն ընդգծում էին, որ գիտությունն առանց փիլիսոփայական ընդհանրացումների փաստերի պարզ հանրագումար է. փիլիսոփայությունը տեսականացնում է մասնավոր գիտությունները¹⁶:

Մրանով որոշվում է նաև փիլիսոփայության բնույթը: Ըստ Ֆրանգյանի՝ փիլիսոփայությունն ընդհանուր գիտություն է: Նրա բաղկացուցիչ և էական տարրերն են իմացաբանությունը, բարոյագիտությունը, հոգեբանությունը, տրամաբանությունը, բնագիտությունը և այլն: Դրանցից ոչ մեկն առանձին-առանձին չի կարելի հանգեցնել զուտ փիլիսոփայությանը, թեև նման և խիստ միակողմանի ըմբռնումներ եղել են փիլիսոփայության պատմության մեջ: Միջնադարում, օրինակ, փիլիսոփայությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ աստվածաբանական վարդապետություն. փիլիսոփայությունը վերածվել էր աստվածաբանության: Կան մտածողներ, որոնք փիլիսոփայությունը սահմանում են որպես իմացաբանություն: Ճիշտ է, Ֆրանգյանը համաձայն է, որ իմացաբանությունը և բարոյագիտությունը փիլիսոփայության բաժիններն են, բայց այն չի նույնանում դրանց հետ: Այս բոլորի շարքում փիլիսոփայության պատմության մեջ գերիշխող տեսակետն անտիկ ըմբռնումն է: Նոր շրջանի փիլիսոփայության երկու մեծություններ՝ Դեկարտն ու Ֆ. Բեկոնը, որոնցից առաջինը ռացիոնալիստ է, երկրորդը՝ էմպիրիկ, այնուամենայնիվ, տալիս են փիլիսոփայության միևնույն սահմանումը. փիլիսոփայությունը նբանց համար ընդհանուր գիտություն է: Շելլինգի համար փիլիսոփայությունը բացարձակ գիտություն է: Սպենսերի կարծիքով՝ փիլիսոփայությունը բոլոր գիտական համակարգերի համադրությունն է:

Ֆրանգյանը համակարծիք է այս մտածողներին: Չուտ փիլիսոփայության առարկան իրերի և երևույթների ամբողջությունն է, իրականությունն իր լրիվությամբ: Ամենախոշոր և իսկական փիլիսոփան նա է, ում հոգին ընդգրկում է ամբողջը, ում հայացքն ուղղված է ամբողջ իրականությանը. «Այն, ինչ կրում է մասնակի, բացառիկ բնոյթ, տեղ չունի մեծ փիլիսոփայի հոգու մեջ: Փիլիսոփայի հոգին ընտրում է այն, ինչ ընդհանուր է, ինչ տիեզերական է, համաշխարհային»¹⁷: Բայց դա չի նշանակում, թե փիլիսոփայությունը քարացած մտածն է: Փիլիսոփայությունը հավերժորեն փոխվում է գիտության հետ միասին: Փիլիսոփայությունն անիմաստ է առանց դրական գիտությունների: Բայց, մյուս կողմից՝ գիտության մեջ անհրաժեշտաբար և միշտ կա փիլիսոփայությունը: Անկարելի է փիլիսոփայությունն այս

¹⁶ Տե՛ս Մ. Ա. Չաքարյան, Փիլիսոփայության պատմություն, Եր., 2005, էջ 351:

¹⁷ Ե. Ֆրանգյան, Ի՞նչ է փիլիսոփայությունը, էջ 19:

կամ այն գիտությունից բացարձակապես դեն նետել: Հաճախ և տարբեր ժամանակներում այս կամ այն գիտնականն արհամարհանքով է արտահայտվել փիլիսոփայության մասին: Բայց հենց նույն այդ գիտնականի ուսմունքում իր կամքին հակառակ երևում է որոշակի փիլիսոփայություն: Նման երևույթ է նկատվում Կ. Մարքսի երկերում: Նա կարծես ավետեց փիլիսոփայության վախճանը, բայց ստեղծեց մի նոր փիլիսոփայություն: Նույնը կարելի է ասել Է. Մախի մասին: Նա առաջին կարգի գիտնական էր, բայց հանկարծ, անգամ իր ցանկությանը հակառակ, դարձավ նաև առաջին կարգի փիլիսոփա: «Գիտությունը կարիք ունի փիլիսոփայութեան, ինչպես փիլիսոփայութիւնը՝ գիտութեան. հակառակ դեպքում փիլիսոփայութիւնը կլինի մի դատարկ վերացականութիւն»²⁰: Ոչ միայն XX դարում՝ դրական գիտության գերիշխանության շրջանում, այլև առհասարակ փիլիսոփայությունը և գիտությունն անբաժան են եղել: Այդ երևույթն առկա էր նաև հնադարում: Պլատոնը պահանջում էր, որ մաթեմատիկա հիմնովին չիմացողը չմտնի իր ակադեմիան: Իսկ մաթեմատիկան դրական գիտություն էր: Այսօր գիտնականին անհրաժեշտ է փիլիսոփայական կրթություն, իսկ փիլիսոփային՝ գիտություն: Ֆրանգյանը միանգամայն ճիշտ և շատ հետաքրքրական է համարում Օ. Կոնտի մի բնորոշումը. նա փիլիսոփաներին անվանում է «ընդհանուրի» մասնագետներ, իսկ գիտնականներին՝ «մասնակիի», այսինքն՝ մի գիտության մասնագետներ:

Ամեն մի գիտություն, ամեն մի գիտնական ունի իր մասնագիտական փիլիսոփայությունը: Այնպես որ, ընդհանուր փիլիսոփայության հետ մեկտեղ կան մասնագիտական փիլիսոփայություններ. պատմափիլիսոփայություն, իրավունքի փիլիսոփայություն, բնափիլիսոփայություն, կրոնափիլիսոփայություն և այլն: Ֆրանգյանը գիտնականներին կոչում է փիլիսոփայության աշխատակիցներ: Նրանցից յուրաքանչյուրն ուսումնասիրում է իրականության միայն մի մասը, բայց ոչ ոք չի դիտարկում ամբողջ իրականությունը: Դա վերապահված է միայն փիլիսոփայությանը:

Կարելի է չհամաձայնել այս մտքերին, քանի որ պոզիտիվիզմի և դրա տրամաբանական շարունակություն հանդիսացող համադրական մոնիզմի համակարգում փիլիսոփայությունը կորցնում է իր աշխարհայացքային ինքնատիպությունը և վերածվում գիտական տվյալների մեխանիկական համադրության: Բացի դրանից՝ դժվար է ընդունել նաև այն միտքը, որ գիտություններն ուսումնասիրում են իրականության մի առանձին մասը, իսկ ողջ իրականությունն ուսումնասիրվում է փիլիսոփայության կողմից: Ցանկացած գիտության, այդ թվում՝ և փիլիսոփայության՝ որպես յուրահատուկ գիտության ուսումնասիրության առարկան իրականությունն է: Յուրաքանչյուր գիտություն ուսումնասիրում է այդ իրականությունը միայն իրեն հատուկ տեսանկյունից: Օրինակ, ֆիզիկան ուսումնասիրում է ողջ իրականությունը զուտ ֆիզիկական տեսանկյունից, կենսաբանությունը՝ զուտ կենսաբանական տեսանկյունից: Փիլիսոփայությունը ևս՝ որպես ինքնատիպ համակարգ, ուսումնասիրում է իրականությունը միայն իրեն հատուկ՝ փիլիսոփայական դիրքերից:

Ինչպես տեսանք, XX դարի ականավոր մտածող Երվանդ Ֆրանգյանը, լինելով պոզիտիվիստական փիլիսոփայության ներկայացուցիչ և ընդհանուր առմամբ ընդունելով այդ ուղղության հիմնական դրույթները, այնուամենայնիվ առաջադրում է փիլիսոփայական ինքնատիպ տեսակետ: Ի տարբերություն պոզիտիվիստ մյուս փիլիսոփաների, որոնք կամ թերագնահատում են փիլիսոփայության

²⁰ Ե. Ֆրանգյան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը..., էջ 14:

Ֆրանգյանը հարցերի այս շրջանակի հետ է կապում երրորդ հարցի լուծումը. ռ՞ո՞ն է փիլիսոփայության ուսումնասիրության առարկան: Փիլիսոփայական մտածողության առանձնահատկությունն այն է, որ նա չի վերցնում առանձին հարցերը և քննում մեկուսացած, այլ քննում է հարցերն ամբողջության, ընդհանուր կապակցվածության մեջ: Եթե գիտության վերլուծության առարկան իրականության մի հատվածն է, մի կողմը, ապա փիլիսոփայությունն ընդգրկում է բովանդակ իրականությունը: Թե՛ մեկը, թե՛ մյուսն ունեն միևնույն նյութը: Նրանք միմյանցից անբաժան են և փոխալայմանավորված: Ըստ Ֆրանգյանի՝ չկա գիտություն առանց փիլիսոփայության, և փիլիսոփայություն՝ առանց գիտության: Գիտությունները կազմում են փիլիսոփայության հիմքը, իսկ փիլիսոփայությունը գիտությունների ընդհանուր օրենքներն ու հիմնադրույթները բերում է ընդհանուր հայտարարի՝ վերածելով մի ամբողջական համակարգի: Առհասարակ փիլիսոփայության և գիտության փոխհարաբերության վերաբերյալ նման տեսակետը բավական տարածված էր ժամանակաշրջանի ինչպես եվրոպական, այնպես էլ հայ փիլիսոփայական մտքի մեջ: Հայ մտածողներն ընդգծում էին, որ գիտությունն առանց փիլիսոփայական ընդհանրացումների փաստերի պարզ հանրագումար է. փիլիսոփայությունը տեսականացնում է մասնավոր գիտությունները¹⁶:

Մրանով որոշվում է նաև փիլիսոփայության բնույթը: Ըստ Ֆրանգյանի՝ փիլիսոփայությունն ընդհանուր գիտություն է: Նրա բաղկացուցիչ և եական տարրերն են իմացաբանությունը, բարոյագիտությունը, հոգեբանությունը, տրամաբանությունը, բնագիտությունը և այլն: Դրանցից ոչ մեկն առանձին-առանձին չի կարելի հանգեցնել զուտ փիլիսոփայությանը, թեև նման և խիստ միակողմանի ըմբռնումներ եղել են փիլիսոփայության պատմության մեջ: Միջնադարում, օրինակ, փիլիսոփայությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ աստվածաբանական վարդապետություն. փիլիսոփայությունը վերածվել էր աստվածաբանության: Կան մտածողներ, որոնք փիլիսոփայությունը սահմանում են որպես իմացաբանություն: Ճիշտ է, Ֆրանգյանը համաձայն է, որ իմացաբանությունը և բարոյագիտությունը փիլիսոփայության բաժիններն են, բայց այն չի նույնանում դրանց հետ: Այս բոլորի շարքում փիլիսոփայության պատմության մեջ գերիշխող տեսակետն անտիկ ըմբռնումն է: Նոր շրջանի փիլիսոփայության երկու մեծություններ՝ Դեկարտն ու Ֆ. Բեկոնը, որոնցից առաջինը ռացիոնալիստ է, երկրորդը՝ էմպիրիկ, այնուամենայնիվ, տալիս են փիլիսոփայության միևնույն սահմանումը. փիլիսոփայությունը նբանց համար ընդհանուր գիտություն է: Շելլինգի համար փիլիսոփայությունը բացարձակ գիտություն է: Սպենսերի կարծիքով՝ փիլիսոփայությունը բոլոր գիտական համակարգերի համադրությունն է:

Ֆրանգյանը համակարծիք է այս մտածողներից: Չուտ փիլիսոփայության առարկան իրերի և երևույթների ամբողջությունն է, իրականությունն իր լրիվությամբ: Ամենախոշոր և իսկական փիլիսոփան նա է, ում հոգին ընդգրկում է ամբողջը, ում հայացքն ուղղված է ամբողջ իրականությանը. «Այն, ինչ կրում է մասնակի, բացառիկ բնույթ, տեղ չունի մեծ փիլիսոփայի հոգու մեջ: Փիլիսոփայի հոգին ընտրում է այն, ինչ ընդհանուր է, ինչ տիեզերական է, համաշխարհային»¹⁷: Բայց դա չի նշանակում, թե փիլիսոփայությունը քարացած մտածն է: Փիլիսոփայությունը հավերժորեն փոխվում է գիտության հետ միասին: Փիլիսոփայությունն անիմաստ է առանց դրական գիտությունների: Բայց, մյուս կողմից՝ գիտության մեջ անհրաժեշտաբար և միշտ կա փիլիսոփայությունը: Անկարելի է փիլիսոփայությունն այս

¹⁶ Տե՛ս Ս. Ա. Չաքարյան, Փիլիսոփայության պատմություն, Եր., 2005, էջ 351:

¹⁷ Ե. Ֆրանգյան, Ի՞նչ է փիլիսոփայությունը, էջ 19:

կամ այն գիտությունից բացարձակապես դեն նետել: Հաճախ և տարբեր ժամանակներում այս կամ այն գիտնականն արհամարհանքով է արտահայտվել փիլիսոփայության մասին: Բայց հենց նույն այդ գիտնականի ուսմունքում իր կամքին հակառակ երևում է որոշակի փիլիսոփայություն: Նման երևույթ է նկատվում Կ. Մարքսի երկերում: Նա կարծես ավետեց փիլիսոփայության վախճանը, բայց ստեղծեց մի նոր փիլիսոփայություն: Նույնը կարելի է ասել է. Մախի մասին: Նա առաջին կարգի գիտնական էր, բայց հանկարծ, անգամ իր ցանկությանը հակառակ, դարձավ նաև առաջին կարգի փիլիսոփա: «Գիտութիւնը կարիք ունի փիլիսոփայութեան, ինչպէս փիլիսոփայութիւնը՝ գիտութեան. հակառակ դէպքում փիլիսոփայութիւնը կլինի մի դատարկ վերացականութիւն»²⁰: Ոչ միայն XX դարում՝ դրական գիտության գերիշխանության շրջանում, այլև առհասարակ փիլիսոփայությունը և գիտությունն անբաժան են եղել: Այդ երևույթն առկա էր նաև հնադարում: Պլատոնը պահանջում էր, որ մաթեմատիկա հիմնովին չիմացողը չմտնի իր ակադեմիան: Իսկ մաթեմատիկան դրական գիտություն էր: Այսօր գիտնականին անհրաժեշտ է փիլիսոփայական կրթություն, իսկ փիլիսոփային՝ գիտություն: Ֆրանգյանը միանգամայն ճիշտ և շատ հետաքրքրական է համարում Օ. Կոնտի մի բնորոշումը. նա փիլիսոփաներին անվանում է «ընդհանուրի» մասնագետներ, իսկ գիտնականներին՝ «մասնակիի», այսինքն՝ մի գիտության մասնագետներ:

Ամեն մի գիտություն, ամեն մի գիտնական ունի իր մասնագիտական փիլիսոփայությունը: Այնպես որ, ընդհանուր փիլիսոփայության հետ մեկտեղ կան մասնագիտական փիլիսոփայություններ. պատմափիլիսոփայություն, իրավունքի փիլիսոփայություն, բնափիլիսոփայություն, կրոնափիլիսոփայություն և այլն: Ֆրանգյանը գիտնականներին կոչում է փիլիսոփայության աշխատակիցներ: Նրանցից յուրաքանչյուրն ուսումնասիրում է իրականության միայն մի մասը, բայց ոչ ոք չի դիտարկում ամբողջ իրականությունը: Դա վերապահված է միայն փիլիսոփայությանը:

Կարելի է չհամաձայնել այս մտքերին, քանի որ պոզիտիվիզմի և դրա տրամաբանական շարունակություն հանդիսացող համադրական մոնիզմի համակարգում փիլիսոփայությունը կորցնում է իր աշխարհայացքային ինքնատիպությունը և վերածվում գիտական տվյալների մեխանիկական համադրության: Բացի դրանից՝ դժվար է ընդունել նաև այն միտքը, որ գիտություններն ուսումնասիրում են իրականության մի առանձին մասը, իսկ ողջ իրականությունն ուսումնասիրվում է փիլիսոփայության կողմից: Ցանկացած գիտության, այդ թվում՝ և փիլիսոփայության՝ որպես յուրահատուկ գիտության ուսումնասիրության առարկան իրականությունն է: Յուրաքանչյուր գիտություն ուսումնասիրում է այդ իրականությունը միայն իրեն հատուկ տեսանկյունից: Օրինակ, ֆիզիկան ուսումնասիրում է ողջ իրականությունը զուտ ֆիզիկական տեսանկյունից, կենսաբանությունը՝ զուտ կենսաբանական տեսանկյունից: Փիլիսոփայությունը և՛ որպես ինքնատիպ համակարգ, ուսումնասիրում է իրականությունը միայն իրեն հատուկ՝ փիլիսոփայական դիրքերից:

Ինչպես տեսանք, XX դարի ականավոր մտածող Երվանդ Ֆրանգյանը, լինելով պոզիտիվիստական փիլիսոփայության ներկայացուցիչ և ընդհանուր առմամբ ընդունելով այդ ուղղության հիմնական դրույթները, այնուամենայնիվ առաջադրում է փիլիսոփայական ինքնատիպ տեսակետ: Ի տարբերություն պոզիտիվիստ մյուս փիլիսոփաների, որոնք կամ թերագնահատում են փիլիսոփայության

²⁰ Ե. Ֆրանգյան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը..., էջ 14:

նշանակությունը, կամ ժխտում նրա գոյության անհրաժեշտությունը, Ֆրանգյանը, շարունակելով հայ փիլիսոփայության ավանդույթները, կարևորում է փիլիսոփայության տեղն ու դերը և՛ սոցիալական կյանքում, և՛ գիտական ոլորտում: Սա Ֆրանգյանի փիլիսոփայական տեսության ամենաէական առանձնահատկությունն է: Այս իմաստով նրան պոզիտիվիստ պետք է համարել որոշ վերապահումով: Հետևելով անհաղթյալ ուղղությանը՝ Ֆրանգյանն ընդգծում է, որ փիլիսոփայությունը վերացական երևույթ չէ. այն, լինելով անբաժան իրականությունից ու դրական գիտություններից, միաժամանակ գորավոր ազդակ է, որը մեծ դեր է խաղում մարդկանց կյանքում ու հասարակության մեջ: Փիլիսոփայությունը միայն արտոնյալ մարդկանց հասանելի աշխարհայացք չէ. այն ընդհանուր մարդկային գործառույթ է և որպես այդպիսին՝ միշտ կշարունակվի: Վերջին մարդու հետ միայն կվերանա փիլիսոփայությունը:

С. Н. ОГАНЯН - *Երվանդ Փրանյան օ սւչնոստի և նշանուի փիլոսոփու.* -

Статья посвящена особенностям философии выдающегося армянского мыслителя 20-го века Ерванда Франгяна. Несмотря на то, что широко распространённый в это время позитивизм пытался отказаться от “неизбежно неразрешимых” философских вопросов, Франгян, будучи позитивистом махистского направления, не отрицает мировоззренческую сторону философии. Он, продолжив традиции армянской философии, заложенные Давидом Анахтом, подчёркивает место и роль философии в общественной жизни и науке. Франгян считает, что философия - общечеловеческая функция и будет существовать всегда, пока существует человек. Исходя из этого, “синтетического мониста” Франгяна можно назвать позитивистом лишь с некоторой оговоркой.